

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ COVID-19-Ի ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանրային Առողջության Հրամանը Շտապ Մեկուսացման Վերաբերյալ
Վերանայված Հրամանը հրապարկվել է **2022թ.-ի հունվարի 11-ին**

Այս Հրամանը փոխարինում է Հանրային Առողջության Շտապ Մեկուսացման Վերաբերյալ
2021թ.-ի դեկտեմբերի 31-ի հրամանին:

Այս Հրամանն ուժի մեջ է մինչև Առողջության Պատասխանատուի կողմից չեղյալ հայտարարվելը:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՀՐԱՄԱՆՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ

ՈՎՔԵՐ ՊԵՏՔ Է ՀԵՏԵՎԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ԱՅՍ ՀՐԱՄԱՆԻՆ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Իրավասության շրջանում ապրող **կամ աշխատող** բոլոր անձանցից, որոնց թեստի արդյունքը եղել է դրական կամ որոնց մոտ ախտորոշվել է COVID-19, պահանջվում է ինքնամեկուսանալ և հետևել սույն Հրամանի բոլոր ցուցումներին՝ անկախ պատվաստման կարգավիճակից, նախկին վարակից կամ ախտանիշների բացակայությունից: Անձը համարվում է COVID-19-ով ախտորոշված՝ հիմնվելով հետևյալ չափանիշներից մեկի կամ երկուսի վրա.

- a) Նա ստացել է COVID-19-ի վիրուսային թեստի դրական պատասխան, և/կամ
- b) Բուժաշխատողը կլինիկորեն կասկածում է, որ անձը վարակված է COVID-19-ով:

ԻՆՉ Է ՁԵՉՆԻՑ ՊԱՀԱՆՁՎՈՒՄ ԱՆԵԼ ԵԹԵ ՎԱՐԱԿՎԵԼ ԵՔ COVID-19-ՈՎ

COVID-19-ի տարածումը կանխելու համար Լոս Անջելեսի Շրջանի Առողջության Պատասխանատուն (<<Առողջության Պատասխանատու>>) սույնով ձեզնից պահանջում է անհապաղ՝

- a) Ինքնամեկուսանալ առնվազն 5 օր կամ ավելի երկար ժամանակով, ստորև տե՛ս <<Ինքնամեկուսացման Տևողությունը>>, և
- b) Ձեզ հետ սերտ շփում ունեցած անձանց՝ կոնտակտավորների մասին տեղեկացնել Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչությանը («Հանրային Առողջություն») Հանրային Առողջության կողմից կոնտակտներին հետևելու նպատակով անցկացվող հարցազրույցի ժամանակ և
- c) Ձեզ հետ սերտ շփում ունեցող անձանց տեղեկացնել, որ նրանք շփվել են վարակի հետ և պետք է հետևեն [COVID-19 Վարակակրի Հետ Սերտ Շփում Ունեցած Անձանց Հրահանգներին](#) (եթե ձեր COVID-19-ի վիրուսային թեստի պատասխանը եղել է դրական) և
- d) Կապ հաստատել Հանրային Առողջության հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (833) 540-0473, այս Հրամանը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում, եթե դեռ չեք լրացրել [կոնտակտներին՝ վարակակրի հետ շփվածներին հետևելու հարցումը](#), և
- e) Հետևել սույն Հրամանի բոլոր ցուցումներին:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Ինքնամեկուսացեք, Մինչև Այլևս COVID-19 Տարածելու Վտանգ Չներկայացնեք:

Դուք, անկախ պատվաստման կարգավիճակից, նախկին COVID-19 վարակից կամ ախտանիշների բացակայությունից, պետք է ինքնամեկուսանաք (մնաք ձեր տանը կամ այլ բնակավայրում և մյուսներից հեռու) առնվազն 5 օր և մինչև այլևս COVID-19 տարածելու վտանգ չներկայացնեք (տե՛ս ստորև «Ինքնամեկուսացման Տևողությունը»): Մինչ այդ պահը, դուք չեք

Կարող հեռանալ ձեր մեկուսացման վայրից՝ բացառությամբ երբ անհրաժեշտ է բժշկական օգնություն ստանալ:

Ձեզից պահանջվում է ինքնամեկուսանալ, քանի որ դուք կարող եք փոխանցել COVID-19-ը մյուսներին: Եթե ձեր թեստի պատասխանը դրական է, նկատի ունեցեք կապ հաստատել ձեզ սպասարկող բուժաշխատողի, կլինիկական խորհրդատվական գծի կամ հեռաբժշկության մատակարարի հետ՝ բժշկական գնահատման և հնարավոր բուժման համար, եթե դեռ այդպես չեք արել:

Հնարավոր է՝ ձեզ հետ կապ հաստատեն Հանրային Առողջության Վարչությունից՝ սերտ շփում ունեցած անձանց՝ կոնտակտավորերին հետևելու հարցազրույց անցկացնելու համար: Դուք պետք է ձեզ հետ սերտ շփում ունեցող անձանց մասին, ինչպես սահմանված է ստորև, տեղեկացնենք Հանրային Առողջության Վարչությանը, որպեսզի Հանրային Առողջության Վարչությունը կարողանա որոշել՝ արդյոք ձեր վարակման (դեպքի) հետ կապված բռնկում կա, և սահմանափակի վարակի հետագա փոխանցումը ուրիշներին:

Ինքնամեկուսացման Ցուցումներ: Մեկուսացած ժամանակ ձեզից պահանջվում է հետևել «COVID-19-ով վարակված մարդկանց համար նախատեսված Տնային Մեկուսացման Հրահանգներին», որոնք հասանելի են անգլերեն, իսպաներեն և այլ լեզուներով՝ <http://ph.lacounty.gov/covidisolation>: Կրեք դեմքը լավ գրկող դիմակ ուրիշ անձանց շրջապատում գտնվելիս և փակ և բացօթյա վայրերում՝ ընդհանուր առմամբ 10 օր: Մեծահասակները պետք է կրեն համապատասխան բժշկական կարգի դիմակ (վիրաբուժական կամ շնչառական դիմակ): Երեխաները պետք է կրեն դեմքը լավ գրկող ոչ կտորե դիմակ, որն ունի ոչ հյուսված գործվածքի մի քանի շերտ և քթի հատվածում՝ լար:

Ինքնամեկուսացման տևողությունը

COVID-19-ով վարակված բոլոր անձինք պետք է մեկուսանան առնվազն 5 օր: Ձեր մեկուսանալու համար անհրաժեշտ ժամանակը կախված է նրանից՝ արդյոք ունեք [ախտանիշներ](#) և արդյոք 5-րդ օրը կամ ավելի ուշ հանձնած հաջորդող վիրուսային թեստի արդյունքը բացասական է: Եթե թեստավորվում եք 5-րդ օրը կամ ավելի ուշ, ապա ավելի լավ է կիրառել հակազենի թեստը, քանի որ ՆԱԹ/ՊՇՌ (NAAT/PCR) թեստերը կարող են դրական արդյունք ցուցադրել նույնիսկ այն բանից հետո, երբ դուք այլևս վարակիչ չեք:

- A) Եթե ձեր COVID-19-ի թեստի պատասխանը դրական է և ունեք ախտանիշներ, կամ եթե ձեր **բժիշկը կարծում է***, որ դուք վարակված եք COVID-19-ով, դուք պետք է մնաք տանը մինչև՝
- Առնվազն 5 օր անցնի ձեր առաջին ախտանիշների ի հայտ գալուց հետո և
 - Դուք ունենաք COVID-19-ի վիրուսային ախտորոշիչ թեստի բացասական արդյունք^[1] 5-րդ Օրը կամ ավելի ուշ վերցված նմուշից և
 - Առնվազն 24 ժամ ջերմություն չունենաք առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման և
 - Ձեր ախտանիշները բարելավվեն:
- ԿԱՍ-**
- Ձեր ախտանիշների ի հայտ գալուց հետո անցնի առնվազն 10 օր և
 - Առնվազն 24 ժամ ջերմություն չունենաք առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման, և
 - Ձեր ախտանիշները բարելավվեն:

Օր 0-ն ձեր ախտանիշների առաջին օրն է: 1-ին օրը ձեր ախտանիշների ի հայտ գալուց հետո առաջին ամբողջական օրն է:

^[1] Ընդունելի են հակազենի թեստը, նուկլեինաթթվի ուժեղացման թեստը (NAAT) կամ օդակով միջնորդավորված իզոթերմային ուժեղացման (LAMP) թեստը, սակայն խորհուրդ է տրվում, որ մարդիկ կիրառեն հակազենի թեստը՝ մեկուսացումն ավարտելու համար:

* Եթե ձեր բժիշկը ի սկզբանե կարծում էր, որ ձեր ախտանիշները պայմանավորված են COVID-19-ով (և ձեր COVID-19-ի թեստի արդյունքը դրական չի եղել), սակայն նա վերազնահատել է ձեր ախտորոշումը և որոշել է, որ դուք վարակված չեք, դուք կարող եք դադարեցնել մեկուսացումը առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման 24 ժամ ջերմություն չունենալուց հետո: Ծանոթություն. եթե դուք սերտ շփում եք ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, դուք պետք է հետևեք հետևյալ կայքէջում տեղ գտած հրահանգներին՝ [Կարանտին Պահպանելու և Այլ Հրահանգներ Սերտ Շփում Ունեցած Անձանց՝ Կոնտակտավորների Համար](#):

B) Եթե ձեր COVID-19-ի թեստի արդյունքը եղել է դրական և ախտանիշ **չեք ունեցել, դուք պետք է մնաք տանը մինչև՝**

- Առնվազն 5 օր անցնի ձեր **սկզբնական** COVID-19-ի վիրուսային դրական արդյունքով թեստի հանձնման օրվանից **և**
- Դուք ունենաք COVID-19-ի վիրուսային ախտորոշիչ թեստի բացասական արդյունք⁽¹⁾ 5-րդ Օրը կամ ավելի ուշ վերցված նմուշից:

-ԿԱՍ-

- Դուք պետք է մնաք տանը ձեր սկզբնական դրական արդյունքով թեստի հանձնման օրվանից հետո 10 օր:

Օր 0-ն ձեր դրական արդյունքով թեստի **հանձնման** օրն է: 1-ին օրը ձեր դրական արդյունքով թեստի **հանձնմանը** հաջորդող առաջին **ամբողջական** օրն է:

Ծանոթություն: Եթե ձեզ մոտ ախտանիշներ են ի հայտ գալիս մեկուսացման ժամանակ, դուք պետք է հետևեք Մեկուսացման Տևողության հրահանգներին, ինչպես նկարագրված է վերևում *Բաժնի A*-ում:

2. Տեղեկացրեք Ձեզ Հետ Սերտ Շփում Ունեցած Անձանց, Որ Նրանք Շփվել են Վարակի Հետ և Պետք է Հետևեն Կարանտին Պահպանելու Հրահանգներին:

Եթե դուք ունեք վիրուսային թեստի դրական արդյունք, ապա պետք է տեղեկացնեք ձեզ հետ սերտ շփում ունեցած բոլոր անձանց, ինչպես սահմանվում է ստորև, որ նրանք շփվել են COVID-19 վարակի հետ և պետք է հետևեն COVID-19 Վարակի Հետ Սերտ Շփում Ունեցած Անձանց Հրահանգներին, որոնք հասանելի են անգլերենով, իսպաներենով և այլ լեզուներով՝ <http://ph.lacounty.gov/covidquarantine>:

Սերտ Շփումներ Ունեցածների (կոնտակտների) սահմանումը: Սույն Հրամանի նպատակների շրջանակներում «Սերտ շփում ունեցածներ» (կոնտակտներ) համարվում են բոլոր այն մարդիկ, ովքեր շփվել են ձեզ հետ՝ ձեր վարակիչ եղած ժամանակահատվածում*:

- Անձ, ով ձեզանից մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա է գտնվել ընդհանուր 15 րոպե կամ ավել տևողությամբ՝ 24 ժամվա ընթացքում, կամ
- Անձ, ով չպաշտպանված շփում է ունեցել ձեր մարմնի հեղուկների և/կամ արտազատուկների հետ, օրինակ՝ նրա վրա հազացել կամ փռշտացել եք, նույն սպասքից եք օգտվել, ձեր թքի հետ է շփվել կամ ինամել է ձեզ՝ առանց համապատասխան պաշտպանիչ հանդերձանքի կիրառման:

* Դուք համարվում եք վարակիչ ձեր ախտանիշների ի հայտ գալուն նախորդող 2-րդ օրվանից մինչև այն պահը, երբ ձեզանից այլևս չի պահանջվում մեկուսանալ: Եթե դուք COVID-19-ի ախտորոշիչ (վիրուսային) թեստի դրական պատասխան ունեք, բայց ախտանիշներ չունեք, դուք համարվում եք վարակիչ առաջին դրական թեստը հանձնելուն նախորդող 2-րդ օրվանից մինչև այն պահը, երբ **ձեզանից այլևս չպահանջվի մեկուսացված լինել (ինչպես նկարագրված է վերևում՝ <<Ինքնամեկուսացման տևողությունը>> բաժնում):**



3. Կապ Հաստատեք Հանրային Առողջության Վարչության հետ այս Հրամանը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում՝ լրացնելու Կոնտակտներին (Ձեզ Հետ Շփված Մարդկանց) Հետևելու Հարցումը:

Եթե դուք դեռևս չեք ունեցել հարցազրույց ձեր ներկա COVID-19-ի ախտորոշման վերաբերյալ Հանրային Առողջության Վարչության հետ, ապա այս Հրամանը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում դուք պետք է զանգահարեք (833) 540-0473 հեռախոսահամարով՝ լրացնելու [կոնտակտներին հետևելու գաղտնի հարցումը](#): Չանգի ընթացքում դուք կստանաք տեղեկատվություն հասանելի ծառայությունների վերաբերյալ, հնարավորություն կունենաք հարցեր ուղղելու, և ձեզնից կպահանջվի պատասխանել մի քանի պարզ հարցերի, ինչպիսիք են՝ ո՞ր վայրերում եք եղել և ում հետ եք շփվել՝ ձեր վարակող եղած ժամանակ: Անձանց հետ, որոնց մասին դուք կհայտնեք Հանրային Առողջության Մասնագետին, կապ կհաստատեն, և նրանցից կպահանջվի մտալ տանը, որպեսզի կանխեն ուրիշների հիվանդանալը, սակայն նրանց չի տրամադրվի ձեր անունը կամ կոնտակտային տվյալները:

ՀՐԱՄԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն Հրամանի նպատակն է օգնել դանդաղեցնել COVID-19-ի տարածումը, պաշտպանել ավելի բարձր վտանգի տակ գտնվող անձանց և առողջապահական համակարգը՝ շտապօգնության սենյակներում և հիվանդանոցներում հիվանդների կուտակումներից: Վիրուսը կարող է հեշտությամբ տարածվել միմյանց հետ սերտ շփման մեջ գտնվող մարդկանց միջև, հատկապես, եթե նրանք ամբողջովին պատվաստված չեն:

Մարդիկ, ովքեր պատվաստված չեն COVID-19-ի դեմ, գտնվում են COVID-19-ով վարակվելու ամենաբարձր վտանգի ներքո: Չպատվաստված տարեցները և չպատվաստված մարդիկ, որոնք ունեն [առողջության հետ կապված որոշակի խնդիրներ](#), գտնվում են COVID-19 հիվանդությունով ծանր հիվանդանալու ամենաբարձր վտանգի ներքո: [Թուլացած հմուտային համակարգ](#) ունեցող մարդիկ, ովքեր ամբողջովին պատվաստված են, կարող են այնքան էլ լավ չարձագանքել պատվաստանյութին, ուստի, հնարավոր է՝ նրանք նույնպես լինեն ծանր հիվանդանալու վտանգի ներքո: Omicron ենթատեսակի առկայության դեպքում լիովին պատվաստված մարդկանց ավելի մեծ տոկոսը կարող է վարակվել և իրապես վարակվում է: Այնուամենայնիվ, լիովին պատվաստված և խթանիչ դեղաչափը ստացած անձինք շարունակում են գտնվել վարակվելու ամենացածր վտանգի ներքո և լավ պաշտպանված են COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալուց և մահանալուց: Հատկանշական է, որ պատվաստմանը հաջորդող այս վարակները սովորաբար առաջացնում են միայն թեթև ախտանիշներ, եթե այդպիսիք ընդհանրապես առաջացնում են: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ ամբողջովին պատվաստված մարդիկ վիրուսը տարածեն ուրիշ մարդկանց:

Սույն Հրամանը հիմնված է ներկայումս հայտնի և մատչելի գիտական ապացույցների և լավագույն փորձի վրա: Մեկուսացումը և կարանտինը խորհուրդ են տրվում Հիվանդությունների վերահսկման և Կանխարգելման Կենտրոնների (CDC) և հանրային առողջության այլ մասնագետների կողմից՝ որպես COVID-19-ի տարածումը կանխող ապացուցված ռազմավարություն:

ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒԺ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Պատասխանատուի այս Հրամանը ստեղծվել է Կալիֆորնիայի Առողջապահության և Անվտանգության Օրենքների 101040, 101085, 120175, 120215, 120220, 120225 և 120295 և Լոս Անջելեսի Շրջանի Օրենսգրքի 11.02.030 Բաժինների իրավասության ներքո: Առողջության Պատասխանատուն կարող է հավելյալ գործողություն(ներ) ձեռնարկել, որոնք կարող են ներառել քաղաքացիական կալանք կամ պահանջել տվյալ անձից մտալ

առողջապահական հաստատությունում կամ այլ վայրում, կամ նշանակել վարչական տուգանք՝ պաշտպանելու հասարակության առողջությունը, եթե սույն Հրամանին ենթակա անձը խախտի Հրամանը կամ չենթարկվի դրան:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- Տնային Սեկուսացման Հրահանգներ՝ COVID-19 Ունեցող Մարդկանց Համար
<http://ph.lacounty.gov/covidisolation> (անգլերեն և այլ լեզուներով)
<http://ph.lacounty.gov/covidaislamiento> (իսպաներեն)

Աղբյուրներ Սերտ Շփվողների Համար՝

- Հրահանգներ COVID-19 Ունեցողների Հետ Սերտ Շփվողների Համար՝
<http://ph.lacounty.gov/covidquarantine> (անգլերեն և այլ լեզուներով)
<http://ph.lacounty.gov/covidcuarentena> (իսպաներեն)
- Հանրային Առողջության Շտապ Կարանտինի Հրաման՝
<http://ph.lacounty.gov/Coronavirus/reopening-la.htm#quarantine> (անգլերեն և այլ լեզուներով)
http://ph.lacounty.gov/Coronavirus/docs/HOO/HOO_Coronavirus_Blanket_Quarantine-Armenian.pdf
(հայերեն)

ՀՐԱՄԱՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Եթե այս Հրամանի հետ կապված հարցեր ունեք, զանգահարեք Լոս Անջելեսի Շրջանի Առողջության Վարչություն՝ (833) 540-0473 հեռախոսահամարով:

ՍՈՒՅՆԸ ԿԱՐԳԱԴՐՎԱԾ Է՝



Muntu Davis, M.D., M.P.H.
Առողջության Պատասխանատու,
Լոս Անջելեսի Շրջան

1/11/22

Ամսաթիվ